ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Յուլիս 6. Երևանի թեմական խորհուրդն յայտնել էր Սինոդին թէ՝ Ուլիա Նորաշէն գիւղի Թադէոս քահանան անուսում գտնուելով իւր հրամանին, չի յանձն առնում կատարել երկամսեայ ապաշխարանքը, որն ինքը նշանակել է նորա արբեցութեան և անվայել գնացքի համար. թէ՝ այդ քահանան վրդովում է ժողովրդի անդորրութիւնը, միշտ սերմանելով նորանցում խռովութիւն և չարութիւն. թէ՝ լինելով կրթութեան թշնամի՝ զանազան բարուբանքներ է բարդում դպրոցի պաշտօնեաների վրայ և յորդորում ծնողներին իրանց որդիներին դպրոց չտալ. թէ՝ նոյն քահանան գործակալ կարապետ քահանայի վերայ ծածուկ զրպարտութիւն է արել, որ իբր նա չէ թոյլ տալիս ժողովրդականներին իրանց որդիներին ուղարկել Ուլնիայ Նորաշէնի Արք. շինական դպրոցը և այդպիսի դպրոցներ բանալուն արգելք է լինում. և սակայն քննութիւնը ապացուցանելով այս ամենի զրպարտանք լինելը՝ քննութիւն կատարել տուող պաշտօնեան հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն է հրաւիրում այդ անխաղաղասէր քահանայի անվայել գործունէութեան վրայ։ Դարձեալ՝ նոյն քահանայի մասին բողոքում են, թէ նա չհնազանդելով հոգևոր իշխանութեան հրամանին՝ օրհնել է ուրիշ քահանայի ծխականների պսակը. և ծխական դպրոցի աշակերտաց հարցաքննութեան ժամանակը զարկել է հոգաբարձուին և հայհոյել գործակալին դպրոցի մէջ և հեմարանի օգտին որոշուած 50 հատ նուիրա-

տոմսի գինը 50 ռուբլի չի տալիս՝ որոնք ինքը ծախել ու փողը ստացել է։

Այս ամենից յետոյ Թեմական դպրոցների տեսուչը այս արբեցող, բանսարկու և մոլորեցուցիչ Թադէոս քահանայի չար գործերի և արարմունքի համար դիմումէ Ամենապատիւ Տէր Տեղակալին և իւր ականատես վկայութիւնը խառնելով դպրոցի հոգաբարձութեան բողոքի հետ, գիւղի զրկեալ ուսումնարանի և նրա մէջ սովորող անմեղ մանուկների կողմից խոնարհաբար խնդրումէ պատժել այդ անզգոյշ և վնասակար քահանային, որ զուր տեղը կասկածելի է կացուցանում՝ դպրոցի վարչութիւնը Պետական հաստատութեան առաջ և որ առաւելն է՝ ցրտացնումէ ժողովրդեան սիրտը դէպի ուսումն ու ս. եկեղեցին, որին ինքը սպասաւոր է։

Ատեան կանչուեցաւ այս յանցաւոր քահանան և խօսք չգըտաւ իւրեան արդարացնելու համար։ Սինոդը հրամայեց նախ՝ Տէր Թադէոսի խռովայոյզ և ըմբոստ բնաւորութեան համար առնել նրանից փիլոնը և դադարեցնել քահանայագործութիւնից։ Երկրորդ՝ ուրիշ քահանայի ծուխի պսակը ինքնագլուխ օրհնելու համար պահանջել նրանից 25 ռուբլի տուգանք։ Երրորդ՝ գործակալին զրպարտելու համար ուղարկել նրան Սևան վանքը անսահման ժամանակով ապաշխարելու համար։ Չորրորդ՝ իւր ստացած յիսուն ռուբլի նուիրատոմների գինը պահանջել։ Եւ հինգերորդ նորա ժողովուրդը յանձնել ընկերին հովուելու՝ որին տալ արդիւնքի մի երրորդ մասը, իսկ երկու երրորդը թողնել դատապարտեալի ընտանեացը սնունդ։

—

Յուլիս 6. Սինոդը մերժեց Երևանու Կոնսիստորիայի միջնորդութիւնը Բանաքեռցի Սմբատ Սարգսեանին, Դալուլարցի Դանիէլ Տէր Գէորգեանին և Երևանցի Մկրտիչ Բարաջանեանցին ջահընկալութեան աստիճան տալու մասին՝ թերուսումն լինելու պատճառով։

—

Յուլիսի 6· Սինօդը մերժեց Վաղարշապատցի Միքայէլ Յովակիմեանի խնդիրը նորան ջահընկալութեան աստիճան տալու մասին:

—

Յուլիսի 6· Աղէքսանդրապօլու Վիճակի փոխանորդի յայտարարութեան համեմատ Սինօդը պատուիրեց Երևանի Կոնսիստորիային Բայինդուրցի Սահակ քահանայ Ղանդիլեանցին դադարեցնել քահանայագործութիւնից նորա խռովարար բնաւորութեան և դէպի իւր հոգևոր պաշտամունքը անփոյթ լինելու համար և մի ուրիշ ձեռնհաս քահանաներից կարգել նոյն գիւղի ժողովուրդը հովուելու և տեղւոյն պետական տարրական դըպրոցում Հայոց կրօնի դասատուութեան պաշտօնը վարելու:

—

Յուլիսի 6· Սինօդը մերժեց Ղարաբաղու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութիւնը Շուշիքէնդցի Աղէքսանդր Տէրտէրեանցին ջահընկալութեան աստիճան տալու մասին:

—

Յուլիսի 8· Սինօդը պայման կապեց Վաղարշապատցի Ստեփաննոս Համզաստպեանցի հետ՝ որ այս տարուայ Ս· Աթոռի Մուղնի գիւղի երկրային բերքերից Աթոռին հասնելու մասը (բահրայ) ստանայ Համզաստպեանցը և դորա փոխարէն առաջուց վճարի Սինօդին երեք հարիւր վաթսուն րուբլի:

—

Յուլիսի 8· Ս· Աթոռի Եղուարդ գիւղի այս տարուայ երկրային ամենատեսակ բերքերից Աթոռի ստանալիք մասը Սինօդը օրինաւոր պայմանով յանձնեց Աշտարակցի Սմբատ Սիսակեանին, Առաքել Կարբիէլեանին, Կարապետ Մկրտչեանին և Աթարէգ Աւագեանին՝ 5700 րուբլի գումարով:

—

Յուլիսի 8· Աղէքսանդրապօլցի Սարգիս Տիգրանեանցը 1855 թուականին 1000 րուբլի մուրհակով փոխ էր առել Ախըլցխայի Առաջնորդ այժմ հանգուցեալ Կարապետ Արքեպիսկոպոսից, բայց այլ և այլ սնոտի պատճառներով չէր վճարել մինչև իւր մահը· Սինօդը տեսնելով որ Տիգրանեանցի երեք ժառանգներն էլ

մեռել են և նորա որբ թոռները գտնվում են խնամարկութեան ներքոյ և մանաւանդ՝ որ այն մուրհակի տասնամեայ օրինագրքեալ միջոցը արդէն անցել է, որոշեց այս պահանջը վերջացած համարել։

—

Յուլիսի 8. Սինոդը անցեալ տարի յունիսի 14-ին ուղարկել էր Պետերբուրգի արքունի բանկը ա. 36 5% Հոլանդական առաջին փոխառութեան տոմսեր իրենց կուպոններով 36000 գուլդէնի արժողութեամբ. բ. 117 5% Անգլօ — Հոլանդական փոխառութեան տոմսեր իրենց կուպոններով 12700 ֆունդ ստերլինգի արժողութեամբ. գ. նոցա տոմսերից կտրուած 127 կուպոններ 1891 թուի մարտի մ։կից 317½ ֆունդ ստերլինգ. և դ. 20 5% առաջին Հոլանդական փոխառութեան տոմսեր Վաղարշակերտի (Ալաշկերտ) և Բագրևանդի օգտին գնուած 20,000 գուլդէնի արժողութեամբ իրենց կուպոններով, և խնդրել էր Պ. Կարապետ Եղեանցից որ այդ գումարով գնէ ուրիշ տոկոսաբեր թղթեր և ուղարկէ Սինոդը։ Արքունի բանկը Պ. Եղեանցի խորհրդով գնել ու հասցրել է Մայր Աթոռի գանձարանը հետևեալ արժէ տոմսերը.

ա. 600 5% Դենաբուրգեան և Վեսենբուրգեան երկաթուղու տոմսեր իւրաքանչիւրը 20 ֆունդ ստերլինգ արժողութեամբ, մի ֆունդ ստերլինգը հաշուելով 10 բուբլի ընդամենը 120,000 ր. բ. 40 4% ապահոված ռուսական երկաթուղու տոմսեր իւրաքանչիւրը 625 ր. ոսկու կամ 1000 ր. թղթադրամի արժողութեամբ ընդ ամէն 40,000 բուբլի. և գ. 69 Նոյնպիսի տոմսեր իւրաքանչիւրը 125 բուբ. ոսկու կամ 200 ր. թղթադրամի արժողութեամբ ընդ ամէնն 13800 ր. Համագումարն է 173,800 բուբլի, որից 16300 բուբլու տոմսերը 4% Բագրևանդի և Ալաշկերտի գաղթականներին է, իսկ միւսը Մայր Աթոռին։ Այս ամենը դրուեցաւ ճեմարանի արկղում Ամենապատիւ Տէր Տեղակալի և Գեր. Անդամոց ներկայութեամբ, իսկ գաղթականների տոմսերի հաշիւը ուղարկելու Միացեալ ընկերութեանը Կ. Պոլսոյ ամենապատիւ Պատրիարքի ձեռքով։

Յուլիս 8· Գեղարդայ վանքի վանահօր յայտարարութեան համեմատ Սինօդը թոյլ տուեց Գողթն գիւղի ժողովրդեանը՝ քանդուած եկեղեցւոյ տեղը շինել փայտեայ մի աղօթատուն։

—

Յուլիսի 8· Տփխիսու կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինօդը պատուիրեց Ախալքալակցի Ստեփաննոս քահանայ Աւանեանցին տալ անցաթուղթ երեք ամիս ժամանակով արտասահման գնալու համար։

—

Յուլիսի 10· Սինօդը մերժեց Շարուր գաւառի Նորաշէն գիւղի Յակոմբ քահանայ Տէր Կարապետեանցի խնդիրը նորա Գարեգին որդին Լազարեան ճեմարանը ընդունել տալու մասին։

—

Յուլիսի 10· Երևանու կոնսիստորիայն միջնորդել էր Բէկջըղազլեցի Ռուբէն Տէր Ղազարեանցին քահանայ ձեռնադրելու մասին, նոյնը խնդրել էին և տեղւոյն ժողովուրդն ու քահանաները, բայց Սինօդը տեսնելով որ Բէկջղազլու գիւղը 150 տուն է և ունի երեք քահանայ, քահանայացուն էլ չունի դպրոցական ուսումն, մերժեց թէ կոնսիստորիայի միջնորդութիւնը և թէ քահանայից ու ժողովրդոց խնդիրը։

—

Յուլիսի 10· Գորեցի Յակոմբ Գալստեանցը և Զաքարիա Ծմէնեանցն պարտ էին Ս. Աթոռին 70 րուբ. Գօրիում գտնուող աթոռային տան վարձը. այժմ նոքա աղքատութեան մէջ մեռնելով՝ Սինօդը հրամայեց Տփխիսու կոնսիստորիային այլ ևս ոչինչ չպահանջել նոցանից՝ այս հաշիւը վերջացած համարելով։

—

Օգոստոսի 3· Տփխիսի կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինօդը հրամայեց Սղնախ քաղաքում և Անոգայ գիւղում եղած Մայր Աթոռի կալուածները ցանկով պատել անվնաս և մաքուր պահելու համար։

—

Օգոստոսի 3։ Սինոդը վեց տարի ժամանակով պայման կապեց Ղուզիգիտանցի գինեգործ Սարգիս Միրզայեանցի հետ, որ նա Մայր Աթոռի այգիները իւր հսկողութեամբ մշակելով կանոնաւոր դրութեան վերածէ։

—

Օգոստոսի 3։ Սինոդը մերժեց Երևանի կոնսիստորիայի առաջարկութիւնները Ղարաջորանցի Յակոբը Տէր Աբրահամեանին, Ջլովխանցի Ադամ Մխիթարեանցին, Մահմուտջուխայի Մովսէս Հերթևցեանին, Շինուհայրցի Յովհաննէս սարկաւագ Տէր Բաղդասարեանցին, Շիրվանջուխայի Մարգար Տէր Գէորգեանին, Մէջրդլեցի Կարապետ Տէր Գրիգորեանցին և Ղամարլուեցի Ադամ Տէր Վարդանեանին քահանայ ձեռնադրելու մասին, որովհետև այդ գիւղերում բաւական թւով քահանաներ կան և առաջարկված անձինքը դպրոց մտած ու կարևոր ուսումն ձեռք բերած չեն։

—

Օգոստոսի 4։ Սինոդը մերժեց Տփխիսի կոնսիստորիայի միջնորդութիւնը Խաչատուր Եղէկեանցին հոգևորականութեան մէջ ընդունելու մասին Ծղնէթի եկեղեցուն սպասաւորելու համար և Յովսէփ Առաքելեանցին սարկաւագ ձեռնադրելու մասին Սրղնախի եկեղեցու համար, որովհետև այդ անձինքն իւրեանց ուսման ընթացքը որ և է դպրոցում չեն աւարտել։

—

Օգոստոսի 10։ Սինոդի դատաստանական մասում գտնվում էին կոնսիստորիաների ութսուն և մի յայտարարութիւններ խնամէական հինգերորդ աստիճանի պսակաց թոյլտուութեան համար։ Սինոդի անդամ Սրբազան Գրիգորիս, Սարգիս և Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսները յայտնեցին թէ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնների համեմատ օրէնք չէ իրաւունք տալ այդ աստիճանի պսակներին։ Առեանը հասու լինելով անցեալ ժամանակների պսակների գործերին գտաւ նախ՝ որ երջանկայիշատակ Գէորգ Դ։ Հայրապետի օրով 1879, 1880 և 1881 տարիների ընթացքում թոյլ է տուած նոյն աստիճանի 62 պսակ

և Նորին Սրբութեան մահից յետոյ վաթսուն և ութ. երկրորդ՝ հանգուցեալ Մակար Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակ 95 պսակ, իսկ նորա մահից յետոյ 1891 թուին գրուած են 39 օրագիր նոյն աստիճանում եղած պսակների թոյլտուութեան համար, այդ օրագրերից 24 կատարուած են Ամենապատիւ Տէր Տեղակալ Երեմիա Եպիսկոպոսի և Գեր. Անդամների՝ Սուքիաս, Ներսէս, Սարգիս և Արիստակէս Դաւթեան Եպիսկոպոսների ստորագրութեամբք, իսկ մնացած 15 մնում է անկատար, 11 անստորագիր և 4 ստորագրած չորս անդամից այն է՝ Գեր. Գրիգորիս, Արիստակէս (Սեդրակեան) Սարգիս և Արիստակէս (Դաւթեան) Եպիսկոպոսներից։ Սինոդից թոյլ տուած ընդհանուր պսակների թիւը՝ թէ Տ. Տ. Գէորգ և Մակար Հայրապետաց հաճութեամբ և թէ Նոյին Սրբութեանց գահի պարապորդութեան ժամանակ՝ է 249, և այդ թոյլտուութիւնը ժողովրդեան մէջ օրինակ դառնալով, այժմ անհնարին է մերժել այդ աստիճանի պսակները, որից մեծապէս վնաս է հասնում եկեղեցուն ըստ բարոյականին։ Ուստի Սինոդը հրամայեց Հայոց Թեմական Ատեաններին նոցա յայտարարութիւններում յիշուած 81 անձանց թոյլ տալ մնալ ամուսնութիւն իւրեանց նշանածների հետ ինամէութեան հինգերորդ աստիճանում։

—

Օգոստոսի 10. Երևանցի բարեպաշտօն Համբարձում Եղիազարեանցի խնդրանաց համեմատ՝ Սինոդը թոյլ տուեց նորան որ իւր ծախքով Նորոգէ Ծաղկաձորոյ (Դարաչիչակ) Կեչառուաց մենաստանի խարխուլ տանիքը *) երկաթեայ թիթեղով կամ սրբատաշ քարով։

—

Օգոստոսի 10. Երևանի վիճակի Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը Օրդուբադցի Ղևոնդ քահանայ Բա-

*) Մենաստանը շինել է տուել Գրիգոր Մագիստրոսը Գագիկ Շահընշահ Բագրատունի թագաւորի օրով։ Այժմ պիտի Նորոգուի միայն այդ վանքի գաւթի տանիքը, որովհետև տաճարը—վանքը կիսից աւելի կործանուել է։

լոյեանցին կարգում է վերահսկող Հանդամէջ գիւղում գտնուող Ս. Յովհաննէս—Մկրտիչ ուխտատեղւոյն և պատուիրում՝ որ բոլոր հաշիւն ու զգեստները պատշաճ ցուցակով յանձնուին Տէր Ղևոնդին։

—

Օգոստոսի 10. Տփխիսի Հայոց Կոնսիստորիայն տարւոյս փետր. 17 587 թ. յայտարարութիւնով մատուցանում է Ս. Սինօդի տնօրէնութեան թէլաւի գաւառի Շալուրի գիւղի բնակիչ Յովսէփ և Տասսոյ Յարութիւնեանցների մծղնէութեան գործը. որից երևում է հետևեալը. Տփխիսի նահանգական դատարանն է մտնում՝ յիշեալ Յովսէփ Յարութիւնեանցի իւր հանգուցեալ եղբօր կնոջ—Տասսոյի հետ մեղանչական յարաբերութեան մասին գործ. դատարանը այքի առաջ ունենալով Տփխիսի Կոնսիստորիայի գրութիւնը, որով ցոյց է տալիս յիշեալ Յարութիւնեանցների կենակցութիւնը խնամական երկրորդ աստիճանում կատարուած՝ յանցանք՝ համաձայն պատժական օրինաց 1594 յօդուածի. չորրորդ հատուածի կարճում է քրէական գործի քննութիւնը, յանցաւորներին յանձնելով իրանց հոգևոր իշխանութեան տնօրէնութեան՝ եկեղեցական ապաշխարանքի ենթարկելու համար։ Յիշեալ հատուածի բովանդակութիւնն է այս. Ուրիշ դաւանութեանց անձինք մծղնէութեան համար ենթարկւում են պատժի միայն այն դէպքում՝ երբ նորանցում կայ երկրորդ աստիճանի ազգականութիւն կամ առաջին աստիճանի խնամութիւն։ Սինօդը գրանելով՝ որ Կոնսիստորիայն սխալ է հասկացել Յարութիւնեանցների մէջ եղած խնամութեան աստիճանն. այսինքն՝ իսկապէս առաջին համարուողը երկրորդ է համարուած՝ հրամայեց Կոնսիստորիային ուղղել իւր սխալն և վերատին խնդրել Դատաստանական պալատից յիշեալ մծղնէգործներին խստագոյն պատժի ենթարկել օրինաց համաձայն, ի խրատ և ի զգուշութիւն այլոց։

—

Օգոստոսի 10. Տփխիսի Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինօդը խնդրեց Կովկասու կառավարչապետի տնօրէնութիւնը որ թոյլ տայ մահմեդական Ալի Ալաքպար օղլուն Հայոց դաւանութիւնը ընդունելու։

Օգոստոսի 10։ Աստրախանի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց, որ Եկատերինոդարի երեսփոխանը վերանորոգէ այնտեղի Հայոց եկեղեցին, որոց պատկերների նկարները և խաչկալը 1300 ր։ և պակասորդը լրացնէ ժողովրդի կամաւոր ընծայաբերութեամբ։

—

Օգոստոսի 10։ Ղարաբաղու Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը հրամայեց քահանայորդի Յարութիւն Վարդապետեանցին, որ իւր ուսումը աւարտել է Թեմական դպրոցում ձեռնադրել քահանայ Շուշի քաղաքի Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցուն։

—

Օգոստոսի 14։ Սինոդը Պ։ Պրոկուրորի գրութեան համեմատ հրամայեց։ Կոլեժսկի Ռեգիստրատոր Աւետիս Տէր Դաբրիէլեանցին ճանաչել իւր տնտեսական մասին գործավարի պաշտօն կատարող։

—

Օգոստոս 14։ Տփխիսի Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը Թելաւի գործակալ Յովսէփ քահանայ Տէր Յարութիւնեանցին և Աբել քահանայ Սուքիասեանցին երեքական ամիս ապաշխարութիւն որոշեց Մամեանց Հանգուցեալ Յակոբ քահանայի մարմինը Թելաւի Ս։ եկեղեցւոյ գաւթում թաղելու համար առանց Հոգևոր իշխանութեան հրամանին։

—

Օգոստոս 14։ Սինոդը հրամայեց Երևանի Կոնսիստորիային, որ Նոր Բայազիդցի չորրորդ աստիճանաւոր Վարդան Ազիզեանցի Ներսէս, Աւետիս և Գեղամ որդիքը՝ որոնք ծնուել են նորա երկրորդ կնոջից, ճանաչել որպէս սոսկ աշխարհականի որդիք և Կոնսիստորիայից չորրորդ աստիճանաւորի որդու իրաւունքով նոցա տուած վկայականները խաչանիշ գծերով՝ կցել գործին։

—

Օգոստոս 14։ Պ։ Ռուբէն Հասան-Ջալալեանցին. Սինոդը դարձեալ մի տարի էլ փաստաբան վարձեց Մայր Աթոռի և Վանքերի

կալուածական վիճողական գործերը դատարաններում պաշտպանելու համար անցեալ տարուայ պայմանով այն է՝ տարեկան 1500 ռուբլի վարձով։

—

Օգոստոս 14։ Սինոդը լսելով Հնդկաստանի և Զեյրաւու Հայոց եկեղեցիների երեսփոխան Թովմաս Մելքոնեանցի, Հնդկաստանցի Խաչակիր Յովհաննէս ա։ քահանայ Խաչիկեանի, Նոր-Ջուղայի հայ ժողովրդոց և Պարսկաստանի ու Հնդկաստանի Առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի բողոքները, որոնք գանգատում էին իրարուց զանազան տեսակ անկարգութեանց համար, հասու եղաւ, որ այս բողոքները իւրեանց էութեամբ չեն ընկնում իւր իրաւասութեան ներքոյ, որովհետև Սինոդը չի միջամտում Տաճկաստանի և Պարսկաստանի Հայերի ներքին հոգևոր գործերում։ և մանաւանդ այն Առաջնորդը, որից բողոքաւոր էին եղել, արդէն փոխադրուել է այն վիճակից, ուստի Հրամայեց այդ բողոքները Սինոդում կարձել և բողոքաւորներին ծանուցանել Հնդկաստանի և Պարսկաստանի Առաջնորդ Գեր։ Եսայի եպիսկոպոսի ձեռքով, որ այսուհետև իւրեանց դատերին և պահանջներին բաւականութիւն տալու համար չդիմեն Սինոդին, այլ իւրեանց Առաջնորդին կամ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։